

## ՆԱՐԵԿ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

### ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԲԱՅԵՐԻ ԴԱՍՏԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննել է իրավունքում բացերի դասակարգման հետ կապված հիմնախնդիրը:

Հոդվածում հեղինակը հանգել է այն եզրակացության, որ իրավունքում բացերը, որպես կանոն, կարելի է դասակարգել երեք հիմնական տեսակի՝ ձևական (տեխնիկական), կեղծ և իրական: Սրանց կարելի է ավելացնել նաև՝ սկզբնական և հետագա բացերը իրավունքում:

*Հիմնաբառեր- բաց իրավունքում, բացը օրենսդրությունում, իրավակարգավորում, համանմանություն (անարդիա), ձևական, կեղծ և իրական բացեր:*

Իրավական կարգավորման կատարելագործման տեսակետից ոչ պակաս կարևոր նշանակություն ունի իրավունքում և դրա չափանիշներում բացերի դասակարգման հիմնախնդրի լուծումը, քանի որ կախված որոշակի դասին (տեսակին) բացի պատկանելիությունից տարբեր ձևով է լուծվում իրավակիրառական մարմինների, այդ թվում՝ արդարադատության մարմինների կողմից դրա հաղթահարման մեթոդների ու եղանակների մասին հարցը: Սակայն, որքան տարբեր են հետազոտողների պատկերացումները իրավունքում բացերի էության մասին, նույնչափ տարատեսակ են նաև այն չափանիշները, որոնք իրենք օգտագործում են բացերի ողջ ամբողջականությունը՝ որոշակի տեսակների (դասերի, խմբերի, տարատեսակների) բաժանելու համար:

Մասնագիտական գրականության մեջ, իրավունքում, բացի մեկնաբանման նկատմամբ «նեղ» մոտեցմանը համապատասխան, գոյություն ունի ավանդույթ՝ առանձնացնելու այդպես կոչված իրավունքում «կեղծ» և «իրական» բացերը:

Ընդ որում, կեղծ բացի տակ ընկալվում է այն իրավիճակը, երբ որոշակի հարց, հասարակական հարաբերությունների հստակ մի ոլորտ գտնվում է իրավական կարգավորման սահմաններից դուրս (այսինքն՝ գործող օրենսդրության ոլորտից դուրս), սակայն, անձանց որոշակի շրջանի կարծիքով, ունի դրա կարիքը: Հետևաբար, բացը կեղծ է կոչվում հենց այն պատճառով, որ այն, ըստ բացի սահմանման նկատմամբ «նեղ» մոտեցման կողմնակիցների, փաստորեն չկա նորմատիվ-իրավական ակտերում: Իբրև կեղծ բացի օրինակ, ամենից հեշտ է բերել հասարակական հարաբերությունների այնպիսի մի փաստ, որն իրավական համակարգի զարգացման որոշակի փուլում ընդհանրապես հաշվի չի առնվում գործող օրենսդրության կողմից:

Բացը կեղծ է նաև այն դեպքում, երբ իրավակիրառողը, հստակ նորմ չգտնելով օրենսդրության

մեջ, հանգում է բացի լրացման անհրաժեշտության մասին եզրակացությանը, մինչդեռ իրականում գործող իրավունքում առկա է այդպիսի նորմ:

Իսկ այդպիսի մոտեցման ժամանակ իրական բաց է հանդիսանում իրավունքի այնպիսի նորմի կամ դրա մասի բացակայությունը, որը կարգավորում է իրավական կարգավորման ոլորտում գտնվող հասարակական հարաբերությունները, այսինքն՝ դրանք, որոնք մտնում են գործող օրենսդրության ոլորտի մեջ: Ընդ որում, սակայն, իրական բացի բովանդակության նկատմամբ «նեղ» մոտեցման կողմնակիցների հայացքները բացակայող նորմերի դասակարգմանը: Օրինակ, մեր կարծիքով, գոյություն չունի իրական բացի այն ժամանակ, երբ իրավական կարգավորման ոլորտի մեջ մտնող հասարակական հարաբերությունների որոշակի տեսակը անբավարար չափով է կարգավորված հստակ բովանդակությամբ իրավունքի նորմերով, սակայն առկա են ավելի ընդհանուր բնույթի նորմեր, որոնք լիարժեք հիմնավորմամբ կարող են կիրառելի լինել հասարակական հարաբերությունների տվյալ տեսակին:

Գործող օրենսդրության շրջանակներում հստակ բովանդակությամբ իրավական նորմերի մասնակի բացակայությունը նույնպես հարկավոր է դասել կեղծ բացերի թվին: Իսկ իրական բաց կարելի է համարել միայն վիճելի հարաբերությունը կարգավորող իրավունքի նորմի իսպառ բացակայությունը:

Ինչպես երևում է ասվածից, որոշ դեպքերում իրական բացի տակ հասկանում են անհրաժեշտ նորմատիվ կարգադրությունների ինչպես լրիվ, այնպես էլ՝ մասնակի բացակայությունը, իսկ այլ դեպքերում՝ միայն լրիվը: Սակայն, բոլոր դեպքերում բացերը՝ կեղծ ու իրական բացերի բաժանման դիտարկվող չափանիշներն ի նկատի են առնում իրավական կարգավորման միայն այն ոլորտը, որն արդեն ընդգրկված է օրենսդրությամբ: Հետևաբար,

www.journal.lawinstitute.am

այստեղ խոսքը գնում է օրենքում կեղծ ու իրական բացերի մասին: Հետաքրքրական է, սակայն, նշել, որ անգամ մինչև գործող օրենսդրության շրջանակները դիտարկվող հիմնախնդիրը նեղացնել այդպիսի ակնհայտ ձգտման պարագայում, «կեղծ» բացերի տեսության կողմնակիցները չեն կարող ոչ մի այլ եզրույթ ընտրել (բացի նույն «բացից») իրենց կողմից նկարագրվող իրավական երևույթի համար: Դրանով, բացի «իրականներից» իրենք անուղղակիորեն ճանաչում են նաև այլ կարգի բացերի գոյությունը: Այդ կապակցությամբ կարելի է աջակցել այն հեղինակների տեսակետին, ովքեր արդարացիորեն համարում են, որ չկա ոչ մի հիմք «կեղծ», ոչ իրական բաց հաստատվող նորմատիվ ակտի ի սպառ բացակայությունը համարել պակաս իսկական քան գոյություն ունեցող ակտի ոչ լրիվությունը: «Իրական» և «ոչ իրական» եզրույթները տվյալ դեպքում կարող են միայն ապակողմնորոշել բացերի սահմանման ու լրացման գծով փորձը:

Միևնույն ժամանակ, չի կարելի համաձայնել նաև Ս. Ա. Դրոբիշևսկու և Ե. Յու. Տիխոնրավովի դիրքորոշման հետ, որոնք ձգտում են տարածել կեղծ ու իրական բացերի տեսությունը՝ իրավունքում ընդհանուր առմամբ, բացերի տեսության վրա<sup>2</sup>, քանի որ այս դեպքում, ինչպես արդեն ցույց ենք տվել վերևում, լիովին կորչում է կեղծ բացերի մասին խոսելու իմաստը: Բացի էության սահմանման նկատմամբ «այն» մոտեցման տեսակետից, կեղծ բացեր պարզապես գոյություն չունեն բնության մեջ: Այս իմաստով կարելի է պնդել, որ օրենսդրությունում կարող են լինել բացեր՝ իրավունքի առանձին նորմերի տեսակետից, սակայն օրենսդրության ընդհանուր իմաստի, օրենքների ընդհանուր ոգու տեսակետից, այս բացերը միշտ կարող են լրացված լինել՝ դատական նախադեպերով, իրավունքի կամ օրենքի անալոգիայի միջոցով:

Նկատենք, որ բացերի բաժանումը «իրականների» և «ոչ իրականների» (կարծեցյալի), ու իրականների պատկանում է իրավունքում բացերի առաջին հետազոտողներից մեկին՝ գերմանացի ցիվիլիստ Յիթելմանին, ով իսկական բացեր էր համարում միայն այն դեպքերը, երբ օրենքը «լռում է» և հնարավորություն չի տալիս որոշում կայացնել, այն ժամանակ, երբ որոշումը պետք է հասունացած լինի: Երբ օրենքի կամքը պարզ է, սակայն դրա շրջանակներում առկա են մի քանի հնարավորություններ, իսկ օրենքը լռում է, թե դրանցից որ մեկը նախընտրել:

Իրավունքի բացերը բաժանվում են նաև սկզբնական (նախնական) և հետագա (հերթական) բացերի: Նախնական բացն առկա է այն ժամանակ, երբ օրենսդիրը նորմատիվ ակտի ձևակերպման

մեջ չի կարողացել ընդգրկել բոլոր կենսական դեպքերը, որոնք պահանջում են իրավական կարգավորում, երբ օրենսդիրը այս կամ այն նորմը ձևակերպել է թերություններով: Հետագա բացն առաջանում է նոր հասարակական հարաբերությունների ծագմամբ, առաջացմամբ, որոնք չէին կարող նախատեսվել օրենսդրի կողմից: Հնարավոր է, որ այդ հարաբերությունների տեսակն արդեն ենթարկված լինի իրավական կարգավորման: Այդպիսի բացերի առաջացման պատճառը օրենքների կյանքից հետո մնալու գործընթացներն են:

Դրականության մեջ առանձնացնող իրավունքում բացերի ևս մեկ տարատեսակը՝ «բախումնային» բացերն են: Դրանց առաջացման պատճառ է հանդիսանում մեկ ակտի նորմերում «բացարձակ հակասության» կամ զանազան նորմատիվ ակտերի նորմերի դրույթներում հակասության առկայությունը: Քանի որ և՛ այս, և՛ այն նորմերը գործող են, դրանք չեզոքացնում են միմյանց, ձևավորելով բաց իրավունքի մեջ:

Միևնույն ժամանակ, միմյանց հակասող նորմերը միշտ չէ, որ վկայում են բախումնային բացի մասին, քանի որ այստեղ ամեն ինչ կախված է հակասությունների բնույթից և ձևից: Եթե, ասենք, սուբյեկտի գործողությունը կարգավորվում է միաժամանակ պարտադրող և արգելող նորմով, ապա, կան հիմքեր բացի մասին խոսելու համար: Բաց չի կարող լինել նաև այս դեպքում՝ առնվազն այնքան ժամանակ, մինչդեռ միմյանց հակասող երկու նորմերից դատական մարմինը չի նախընտրի մեկը, որը ենթակա է կիրառմանը: Իսկ եթե խոսքը գնում է միևնույն հարցի պարտադրող և լիազորող նորմերով քննարկման մասին, ապա կարելի է խոսել դրանց հակասականության մասին, սակայն որպես այդպիսին դա այս դեպքում չի լինի: Հետևաբար, իրավունքի նորմերի բախումն ինքնին դեռևս չի նշանակում իրավունքում բացի առկայության մասի: Սակայն նշված հանգամանքները նպաստում են բացերի առաջացմանը:

Նշենք, որ հետազոտության սկզբում տվել ենք իրավունքում բացերի հետևյալ սահմանումը. *բացն* իրավունքում իրենից ներկայացնում է իրավունքի աղբյուրներում այնպիսի նորմերի, սկզբունքների լրիվ կամ մասնակի բացակայությունը, որոնք անհրաժեշտ են այն փաստերի ու կապերի մասնագիտական իրավաբանական գնահատման համար, որոնք առաջացել են կամ ունակ են առաջանալ հասարակական հարաբերությունների այնպիսի ոլորտում, որը մտնում է կամ պետք է մտնի իրավական կարգավորման ոլորտի մեջ (հասարակության մեջ գործող տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ հարաբերությունների ուժով): Դիտարկվող իրավական երևույթի ներկայացված սահման-

ման և վերոնշյալ սկզբունքների հիման վրա, կարելի է առանձնացնել իրավունքում բացերի հետևյալ տարատեսակները.

1) իրավական նորմերի ոչ լրիվությամբ,

2) գոյություն ունեցող նորմատիվ կարգադրությունների հակասությամբ,

3) նորմի ի սպառ բացակայությամբ:

Ակնհայտ է, որ այստեղ անվանված տարատեսակներից երկրորդը կարելի է դասել վերոնկարագրյալ բախումնային հիմնախնդիրներին:

Իրավունքում բացի էության սահմանման նկատմամբ «լայն» մոտեցման հիմնական ներկայացուցիչներից մեկը՝ Ն. Ա. Վլասենկոն սահմանում է հետևյալ չափանիշները, որոնք կարող են օգտագործել բացը՝ ըստ տեսակների բաժանելու համար<sup>4</sup>.

1) իրավական նյութի բովանդակությունն ու բաղադրությունը,

2) բացի առաջացման պատճառներն ու ժամանակը,

3) օրենսդրի վերաբերմունքը բացի նկատմամբ և նրա մեղավորությունը դրանց առաջացման հարցում,

4) բացերի սահմանման եղանակները,

5) վերացման միջոցները:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ բացերի հետագա վերացման տեսակետից առավել ընդունելի ու պարզ է հանդիսանում դրանց տեսակավորումը՝ ըստ հետևյալ հատկանիշների՝

1) ըստ իրավունքի կառուցվածքի՝ իր դրսևորման ձևերի տեսանկյունից. կարելի է խոսել օրենքում, որոշման մեջ բացերի մասին և այլն,

2) ըստ իրավունքի ճյուղերի,

3) ըստ առաջացման ժամանակի:

Այդպես, մասնավորապես, ըստ առաջացման ժամանակի մի շարք հեղինակներ (Ս.Ս. Ալեքսեև, Վ.Վ. Լազարև, Ի.Վ. Միխայլովսկի, Օ.Ֆ. Սկակուն և այլք) առանձնացնում են սկզբնական և հետագա բացերը: Սկզբնական բացերն ի հայտ են գալիս նորմատիվ ակտի հրատարակման պահին: Իրավական համակարգում դրանք, ինչպես ենթադրվում է, առաջանում են այն կապացությամբ, որ օրենսդիրն ընդհանրապես չի իմացել նորմատիվ կարգավորում պահանջող հանգամանքների առկայության մասին, կամ չէր գիտակցում իրեն հայտնի հասարակական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն, կամ, վերջապես, իմանալով դրանց մասին և գիտակցելով իրավունքում դրանց ամրագրման անհրաժեշտությունը, բաց է թողել դրանց կարգավորումը ակտի հրատարակման ժամանակ:

Սկզբնական բացերը, իրենց հերթին կարող են բաժանվել ընդունելի և անընդունելի բացերի: Այն մասով, որով նորմի հրատարակմանն իրավասու

մարմինը չի իմացել և չէր կարող իմանալ իրավական կարգավորում պահանջող (պահանջելու կարողություն ունեցող) հարաբերությունների գոյության մասին, կարելի է խոսել ընդունելի բացերի մասին<sup>5</sup>: Իսկ եթե նորմատիվ ակտեր հրատարակող մարմինը կարող էր իմանալ որոշակի երևույթների առկայության կամ մոտակա ապագայում դրանց առաջացման հնարավորության մասին, բացահայտել դրանց իրավաբանական ձևավորման անհրաժեշտությունը, իմացել է հրատարակվող ակտում որոշակի հարաբերությունների ամրագրման անհրաժեշտության մասին, սակայն բաց է թողել դրանց կարգավորումը, բացերը դառնում են անընդունելի:

Հետագա բացեր ի հայտ են գալիս նորմատիվ ակտի հրատարակումից հետո: Դրանց առաջացումը պայմանավորված է՝

առաջին՝ լիովին նոր, նախկինում գոյություն չունեցած հասարակական հարաբերությունների առաջացում, նոր հանգամանքների առաջացում, որոնք պահանջում են իրավական միջնորդավորում, նոր հարաբերությունների առաջացում, որոնք թեպետ և ընդգրկվում են իրավունքի կողմից, սակայն մանրամասներում չէին կարող նախատեսվել օրենսդրի կողմից,

երկրորդ՝ այնպիսի երևույթների նորմատիվ կարգավորման պահանջի առաջացմամբ, որոնց նկատմամբ իրավունքը նախկինում անտարբեր էր:

- <sup>1</sup> Տե՛ս, Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն-2. Գաախոսություններ: Երևան, 2011թ., էջեր 299-300:
- <sup>2</sup> Տե՛ս, Лазарев В. В. Проблемы в праве пути их устранения. М., 1974. С. 32.
- <sup>3</sup> Տե՛ս, Վաղարշյան Ա.Գ., Նշված աշխ. էջ 301:
- <sup>4</sup> Տե՛ս, Лазарев В. В. Проблемы в праве пути их устранения. М., 1974. С. 32:
- <sup>5</sup> Տե՛ս, Правовые модели и реальность. Отв. ред. Тихомиров Ю. А., Рафалюк Е. Е., Хлуденева Н. И. М., 2014. С. 79-80:

**Нарек Акопян**

Соискатель института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

**Резюме**

*Проблема классификации пробелов в праве*

В настоящей статье автор обстоятельно исследовал проблему, связанную с классификацией пробелов в праве.

В статье автор пришел к выводу, что пробелы в праве, как правило, можно классифицировать по 3-ем основным видам: формальные (технические), ложные и фактические. К ним можно также добавить первичные и последующие пробелы в праве.

*Ключевые слова:* пробел в праве, пробел в законодательстве, правовое регулирование, идентичность (аналогия), формальные, ложные и фактические пробелы.

**Narek Hakobyan**

Research Applicant of the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

**SUMMARY**

*The Issue of Classification of Gaps in the Law*

This article thoroughly discusses the issue of the classification of legislative gaps. As a result, it was concluded that there are three major types of gaps in the law: technical, artificial and genuine. The initial and gaps might be added to the mentioned list.

*Keywords:* gap in the law, legislative omission, legal regulation, analogy, technical, artificial and genuine gaps.